# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 22383; (010)250519 artashatmeria@artashat.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 4346-Ա**

## «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-25/123» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ/ ենթակետով, «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-25/123» ծածկագրով հրավերի /այսուհետ՝ հրավեր/ առաջին մասի 8.15 կետով, հիմք ընդունելով «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-25/123» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետև՝ հանձնաժողով/ 2025թ նոյեմբերի 30-ի թիվ 3-րդ արձանագրության որոշումը, ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ **որոշում եմ.**

1.Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-25/123 | 1 | Դրոշակաձող | 2400000 | ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 42117958 | Ք.Երևան Շեվչենկոյի փողոց 1/14 | 30.10.2025թ | Արտաշատի համայնքապետարան | Գնումների մաին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետ՝ Խատել է սահմանված ժամկետում պայմանագիրը կնքելու և պայմանագրի որակավորման և պայմանագրի | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | կատարման ապահովումները պատվիրատուին ներկայացնելու պարտավորությունը, մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:<br><br>Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ին 2025թվականի հոկտեմբերի 22-ին eauction.armeps.am համակարգի և էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ -ն սահմանված ժամկետում չի կնքել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները: | |

2.Ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին որոշման կայացման հաջորդ օրը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 12

ք.Արտաշատ